ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1962 Общественные науки

Էդ. Շ. Հարությունյան

ՊՈՂՈՍ ՄԵԼԻՔՇԱՀՅԱՆԻ (ՖԻԶԻԿԱ ՊՈՂՈՍ) ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Պողոս Մելիքշահյանը XIX դարի առաջին կեսի պոլսահայ այն առաջավոր մտավորականներից էր, որոնք ակտիվորեն մասնակցում էին կղերամիրայական վերնախավի և սուլթանիզմի դեմ ուղղված արհեստավորների, պանդուխտ մշակների և գյուղացիների պայքարին։

Պողոս Մելիքշահյանը ծնվել է 1788 թ. Իզմիրի մոտ գտնվող Գրգաղաճ գյուղում, չքավորի ընտանիքում։ Նախնական կրթություն տեղում ստանալուց հետո, 1805 թ. ուսումը շարունակելու նպատակով գնում է Իզմիր, ուր և աշակերտում է քահանա Հովնան Վանանդեցուն։ Սակայն քահանան իր տված գիտելիքներով և ուսուցման մեթոդներով չի բավարարում պատանու որոնող և հետաքրքրասեր միտքը։ Զգալով այստեղ «երեք տարվան տված աշխատության ապարդյուն ըլլալը»[1], Պողոսը մեկնում է Կ. Պոլիս։ Նրան չեն հրապուրում կրոնա-դավանաբանական այն վեճերն ու խնդիրները, որոնք արծարծվում էին Պոլսում։ Մայրահեղ ջանասիրությամբ, «ճշմարտությունը ճանչնալու» մեծ ձգտումով նա հետամուտ է լինում փիլիսոփայության և բնական գիտությունների ինքնուրույն ուսումնասիրությանը և կարճ ժամանակամիջոցում, որպես բնական գիտությունների և փիլիսոփայության մեջ հմուտ անձնավորություն Պոլսում ձեռք բերում մեծ համբավ[2]։ «Ադքատ, անխնամ այս մարդը,—գրում է նրա մասին Երվանդ Օտյանը,—միմիայն իր աշխատանքովն ու խելքովն եղած է իր ատենին ամենեն ուսումնական մարդիկներեն մեկը»[3]։ «Ֆիզիկա» մականունը Պողոս Մելիքշահյանն ստացել է բնական գիտությունների բնագավառում ցուցաբերած ընդունակությունների ու գիտելիքների շնորհիվ։ Հենվելով բնական գիտությունների տվյալների վրա, նա պայքարել է սնոտիապաշտության, կրոնական նախապաշարմունքների դեմ։ Այսպես, Մուշում որպես սրբի պաշտում էին մի անձնավորության, որի մի ձեռքը գիշեր ժամանակ լույս էր արձակում։ Եկեղեցականները մեծ եկամուտներ էին ստանում այդ սրբապաշտությունից և պրոպագանդելով «սրբին», փորձում ապացուցել նրա աստվածային ծագումը։ Ֆիզիկա Պողոսը ժողովրդի մեջ սկսում է հակապրոպագանդա մղել և մերկացնել կեղծիքը, ցույց տալով, որ այդտեղ գերբնական ոչ մի բան էլ չկա և ձեռքը փայլում է պարզապես ֆոսֆորից։ Իր ասածը ավելի

---

1 «Կենսագրութիւն Ֆիզիգայ Պողոս պատուելոյն, Տրամաբանութիւն Ֆիզիգայ Պողոս պատուելոյն ի պետս գպրոցականաց», 1876, Կ. Պոլիս, հատոր Ա, էջ 11։

2 Ժամանակակիցները վկայում են, որ մի խումբ անգլիացիներ, գտնվելով Պոլսում և լսելով Ֆիզիկա Պողոսի համբավը, հետաքրքրվում են նրա թանգարանով։ Երբ այդ հարցով գիմում են Պողոսին, նա մատնացույց է անում տիեզերքը. «Ահա, տիեզերքն է իմ թանգարանը»։

3 Ե. Օ տ յ ա ն, Ծանօթագրութիւններ Ֆիզիկա Պողոսին կյանքին վրայ, «Մասիս», 1892, էջ 288։

համոզեցուցիչ դարձնելու նպատակով, նա մարդկանց մի գիշեր հավաքում է իր շուրջը, երկու ձեռքերը պատում ֆոսֆորով, բացատրում ֆոսֆորի լուսատու հատկությունը և դրանով իսկ մերկացնում եկեղեցականների խարեությունը[4]։

Բազմաթիվ առիթներով բնական գիտությունների նվաճումները օգտագործելով պրակտիկ կյանքում, Ֆիզիկա Պողոսը աշխատել է ցույց տալ, որ բնության երևույթների պատճառների իսկական բացատրությունը տալիս է գիտությունը, և ոչ թե կրոնը, որը մարդկանց քարոզում է պասսիվություն, նսեմացնում բնության երևույթների ճանաչման և վերափոխման գործում մարդու պրակտիկ գործունեության դերը։ Այս տեսակետից ուշագրավ է հետևյալ փաստը։ Ժամանակակիցների վկայությամբ XIX դ. 40-ական թվականներին Պոլսում դեռևս անհայտ էր ծծմբի միջոցով խաղողի որթերը բուժելու եղանակը։ Տարիներ շարունակ այդ պատճառով խաղողի բերքի մեծ կորուստներ էին լինում։ Մի տարի Պեղճյան ամիրայի խաղողի որթերը նույնպես հիվանդանում են։ Ինչպես ամիրան, այնպես էլ շատերը հայտարարում են, թե փրկության միակ հույսը աստծո գերբնական միջնորդությունն է։ Ֆիզիկա Պողոսը ծծմբի միջոցով բուժում է որթերը, և ընդգծում, որ մարդը իր հույսը պիտի դնի բնագիտության և իր աշխատանքի վրա[5]։ Եվ պատահական չէ, որ կղերամոլները նրան հռչակում են «Թուլահավատ, կամ թերահավատ ֆիլոսոֆ»։

23 տարեկանից մինչև կյանքի վերջը (1855 թ.) Մելիքշահյանն զբաղվում է մանկավարժությամբ։ «Աստղիկ Արևելյան» հանդեսը այս տեսակետից նրան բնութագրում է որպես մի անձնավորություն, որը «Հայաստանի զավակաց լուսավորության համար ամեն բան աչքն էր առած, բան մը չէր խնայեր»[6]։ Որպես ուսուցիչ նա պաշտոնավարում է Պոլսում, Իզմիրում, Մուշում, Երուսաղեմում, Եգիպտոսում։ Այդ շրջագայություններն իրենց կնիքն են դնում Ֆիզիկա Պողոսի աշխարհայացքի ձևավորման վրա։ Նա ավելի մոտիկից է ծանոթանում հայ ժողովրդի ծանր վիճակին, վճռականորեն կանգնում արհեստավորների շահերի պաշտպանության դիրքերում։ Արհեստավորներին օգնելու նպատակով Պոլսի թաղամասերից մեկում (Զուգուր-խան) նա բաց է անում դպրոց, որտեղ իր ունկնդիրներին՝ արհեստավորներին և նրանց երեխաներին, հայագիտական առարկաներից բացի, ծանոթացնում է փիլիսոփայության և բնական գիտությունների որոշ նվաճումներին։

Ամիրաների, պատրիարքի և սուլթանիզմի դեմ արհեստավորների մղած պայքարին ակտիվ մասնակցություն ունենալու համար Ֆիզիկա Պողոսի նկատմամբ կիրառվում են խիստ հալածանքներ։ 1839 թ. փետրվարի 7-ին պատրիարքարանը ծանր հիվանդ վիճակում ձերբակալում և բանտարկում է նրան մահապարտների խցիկում՝ սպառնալով հանձնել թուրքական կառավարությանը։ Ֆիզիկա Պողոսը մեղադրվում է ոչ միայն էսնաֆական շարժումներին մասնակցելու համար, այլև անաստվածության մեջ։ Ուշագրավ է պրոգրեսիվ ուժերի դեմ կիրառված այդ ռեպրեսիայի նախաձեռնողներից մեկի՝ Զամուրճյանի տված հետևյալ ցուցմունքը պատրիարքին. «Ֆիզիգան կղեվանի եղեր՝ թե քրիստոնեայք պաշտեն երեք աստված, հեթանոսք՝ բազում աստվածք, հրեայք մի աստված, իսկ ես՝ Ֆիզիգայս՝ անաստվածս»[7]։ Պետք է հիշել, որ այդ ժամանակ ան-

4 Տե՛ս «Լույս» շաբաթաթերթ, 1908, № 26, «Մուրբին ձեռքը» հոդվածը։

5 Տե՛ս «Մուրհանդակ», 1906, Կ. Պոլիս, № 2284, «Հին մարդիկ, հին բարքեր»։

6 «Աստղիկ Արևելյան», Կ. Պոլիս, 1855, № 7։

7 «Տրամաբանութիւն Ֆիզիգայի», հատոր Ա, 1876, Կ. Պոլիս, էջ 17։

աստվածությունը դիտվում էր որպես մեծագույն հանցագործություն, և խրստորեն պատժվում պատրիարքարանի կողմից։ Կրոնական աշխարհայացքի դեմ ուղղված, նրա դողմաններին հակասող ամեն մի դաղափարի, ամենաչնչին արարքի համար պատրիարքարանը դատաստան էր տեսնում ազատամիտ մարդկանց հետ։ Պատրիարքարանի կամայական, ինկվիզիտորական այդպիսի գործունեության մասին Կ. Յուրյուճյանը պատմում է հետևյալը. «Պատրիարքարանի անունը ահարկու էր այն ժամանակ։ Երբ բարապան մը մեկուն ներկայանար և «Հրամմէ, վեքիլ հայը սուրբը քեզի կուզէ» ըսեր, մարդուն թուքը կցամաքեր բերանին մեջ և ոտքով-ձեռքով դողալ կսկսեր։ Ընդդիմանալ կարելի չէր։ Բարապանը վերարկվի տակ անբավոր շղթա մը ուներ, զոր ընդդիմացողին վիզը կանցուներ բռնութեամբ և այնպես կքաշեր, կտաներ՝ դամփռ տանելու պես, և ոչ ոք կարող էր ձեռքեն առնուլ։ Վեքիլ հայը սուրբին հետ մանավանդ կատակ կարելի չէր։ Առանց երկար հառաջաբանի կպառկեցուներ պատկառելի խալփախով և լայն քղանցք վերարկուով պարոնը կամ աղան և 25—30 դավազանի հարվածով կմեծարեր»[8]։ Ֆիզիկա Պողոսին հարուցվող «մեղադրանքը» այնքան էլ անհիմն չէր, քանի որ նա բազմաթիվ առիթներով արտահայտել է իր բացասական վերաբերմունքը դեպի կրոնական նախապաշարմունքները, բացահայտել եկեղեցականների խարդախությունները ու խաբեությունները։ Բոլորովին պատահական չէ, որ ժամանակակիցները Ֆիզիկա Պողոսին անվանում էին Զամուրճյանի «աչքին փուշը»։ Այս տեսակետից չափազանց ուշագրավ է հետևյալ փաստը։ 1847 թ. Ֆիզիկա Պողոսը գալիս է Մուշ, ուր սկսում է դասավանդել տրամաբանություն, ճարտասանություն և բարոյագիտություն։ Իր լուսամիտ դաղափարներով և ըմբռնումներով նա հակադրվում է կրոնական հին սովորություններն ու ավանդությունները պահպանող վարդապետներին, որոնք սկսում են դժգոհել. «Ուստի՞ եկավ թերահավատը, պահք կուտե, եկեղեցի չի հաճախեր, փրո՞թ է (բողոքական), ճուհո՞ւթ է, ի՞նչ է»,—ասում էին նրանք։ Ֆիզիկա Պողոսի այս հակաեկեղեցական վարքը առիթ է ծառայում, որպեսզի «առաջնորդը» դումարի հատուկ, այսպես կոչված, «հավատա-քննական» ժողով։ Այս ժողովում Ֆիզիկա Պողոսը հեղնանքով հայտարարում է. «Քրիստոս պիտի դատապարտէ զիս՝ պահքը լուծած ըլլալուս համար։ Ինձի պիտի ըսէ՝ Ֆիզիկա, ե՛րթ ի հուրն յավիտենից, որովհետև պասակեր ես։ Ես պիտի աղաղակեմ—Տեր ողորմեա ինձ, զի որ ինչ մտանէ ընդ բերանն ոչ պղծե զմարդ։ Քեզի ալ, Մեսրոպ վարդապետ, պիտի ըսէ.—Մուտ ի ուրախութիւն Տեառն քոյ, որովհետև թուրշիակեր ես։ Դուն պիտի երթաս դրախտ, իսկ ես պիտի երթամ դժոխք։ Հիմա գոհ եղա՞ր, ա՛լ ինչ կուզես ինձմէ»[9]։ Այս հայտարարությունից հետո նա թողնում է ժողովը և հեռանում։

Վերը նշված ձերբակալության ժամանակ խուզարկում են Ֆիզիկա Պողոսի բնակարանը և ոչնչացնում նրա բոլոր ուսումնասիրությունները՝ թվով 16 աշխատություն։ Այս մասին նա մեծ հուզմունքով է խոսում իր նամակներից մեկում[10]։ Մահապատժից ազատվելով, Ֆիզիկա Պողոսը աքսորվում է Կեսարիա, որտեղից վերադառնում է Թանզիմաթի հրապարակումից հետո և շարունակում հասարակական, քաղաքական և մանկավարժական գործունեությունը։

8 «Մասիս», 1893, երես 162։

9 Տե՛ս «Լույս», 1908, Կ. Պոլիս, № 25, էջ 853, 854։

10 Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Թորոս Ազատյանի արխիվ, բաժին 4-րդ, № 142, էջ 3ա—3բ։

1840 թ. սեպտեմբերի 16-ին թուրքական կառավարության դեմ արհեստավորների երեք հազարանոց խոշոր ցույցին մասնակցելու համար Ֆիզիկա Պողոսը կրկին ձերբակալվում է իբրև ցույցի ղեկավարներից մեկը։

Այսպիսի պայմաններում Ֆիզիկա Պողոսը չի համարձակվում հրապարակել իր ուսումնասիրությունները, մանավանդ որ խավարամոլ տարրերը նրա հասցեին անընդհատ մեղադրագրեր էին ուղարկում պատրիարքարան և թուրքական կառավարության։ Ճիշտ է, Ֆիզիկա Պողոսի աշխատությունների մի զգալի մասը մեզ չի հասել, բայց եղած նյութերն էլ բավական են, որպեսզի փորձենք բնութագրել Ֆիզիկա Պողոսի փիլիսոփայական հայացքները և որոշել նրա տեղը XIX դ. առաջին կեսի հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ։

* * *

Ֆիզիկա Պողոսը փիլիսոփայության հիմնական հարցը թեև լուծում է օբյեկտիվ իդեալիզմի դիրքերից, սակայն ոչ դոգմատիկորեն։ Նրա իդեալիզմը զգալի չափով տարբերվում է այդ ժամանակաշրջանում տիրող զաղափարախոսությունից և հատկապես օրթոդոքսալ կրոնական աշխարհայեցողությունից։ Եթե տվյալ ժամանակաշրջանի հայ ռեակցիայի ներկայացուցիչը՝ Տերոյենցը, պնդում էր, որ ճշմարտությունը «մեկ հատիկ կրնայ ըլլալ, այն է՝ քրիստոնեության սովորեցուցածը»[11], ապա Ֆիզիկա Պողոսը ճշմարտության երկակիության ուսմունքի կողմնակից էր, ուսմունք, որը տվյալ ժամանակաշրջանում հայ փիլիսոփայության մտքի զարգացման գործում դեռևս չէր կորցրել իր պրոգրեսիվ նշանակությունը։ Գոյը բաժանելով երկու տեսակի՝ երևելի և աներևույթ, Ֆիզիկա Պողոսը նշում է, որ դրանց իմացության համար համապատասխանաբար «երկու տեսակի դիտություն սահմանվեր են՝ հավատք և իմաստասիրություն, որ է փիլիսոփայություն»[12]։ Իմացության այդ օբյեկտները, ըստ նրա, ունեն տարբեր «դիտության միջնորդներ», ճանաչման տարբեր մեթոդներ ու եղանակներ։ Եթե փիլիսոփայությունը, դիտական իմացությունը, ըստ հեղինակի, իրականացվում է զգայության և մտածողության միջոցով, անմիջական փորձի օգնությամբ, ապա կրոնական ճշմարտությունները ձեռք են բերվում Ավետարանի միջոցով։ Ֆիզիկա Պողոսի մոտ երկյակ ճշմարտության ուսմունքն այնպես է մշակված, որ ակնառու է փիլիսոփայությանը և դիտությանը տրված նախապատվությունը։ Նա սահմանափակում է հավատի իրավասության շրջանակները, գտնելով, որ «հավատք Ավետարանն դուրս չկրնար անցնիլ»[13], որ «Ամեն ճշմարիտ ծանոթությունները նյութական էից երևույթեն կրյան»[14]։

Նյութական աշխարհի առաջացման հարցը Ֆիզիկա Պողոսը լուծում է յուրովի։ Նա չի համաձայնվում եկեղեցական այն տեսակետի հետ, թե աստված ստեղծել է բնությունը պատրաստի վիճակում, այսինքն այնպես, ինչպես այն կա։ Աշխարհի առաջացման նրա բացատրությունը էապես տարբերվում է նաև «սրբ. գրքում» նկարագրված ստեղծագործության սխեմայից։

Ձժխտելով աստծո գոյությունը, նա գտնում է, որ աստված նախանյութի ստեղծողն ու առաջին շարժիչն է եղել։ 1841 թ. փետրվարի 20-ին Ֆիզիկա Պո-

11 «Երեկ», 1862, № 128։

12 «Տրամաբանության Ֆիզիկայի», 1877, էջ 37։ Տե՛ս նաև ՀՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7257, երես 6ա—բ։

13 Տե՛ս «Տրամաբանություն», էջ 37։

14 Նույն տեղում, էջ 41։

զոսի գրած մի նամակից կարելի է ենթադրել, որ նրա այս տեսակետը նույնպես հիմք է հանդիսացել նրան անաստվածության մեջ մեղադրելու համար։ Նա հայտնում է, որ ձերբակալությունից առաջ ինքը շարադրել է «Հուսումն ի նախանյութն արարածոց», որը նրա վկայությամբ, հիմնովին տարբերվել է թոմիստական փիլիսոփայության կողմից ընդունված նախանյութի գաղափարից[15]։

Դժբախտաբար այդ աշխատությունը մեզ չի հասել։ Նախանյութի մասին շատ ընդհանուր պատկերացում է տալիս վերոհիշյալ նամակի մի փոքր հատվածը։ Ձերբակալությունն ու աքսորը, գրում է նա, «ոչ թողոյր զիս ի մանրաքննին խոյզս ի յայտնին ածել ամբողջականն լրութեամբ զօզեալ խորհուրդն ի նախանիւթն աշխարհի, որ թագուցեալ է որպէս յաններեւոյթն ի հայեցուածոց ռամկին ի ծոց տիեզերական ամբաւութեանս։ Եվ քանզի ի մերն հայկեան բանս ոչ խօսեցան երբեք մինչեւ ցարդ զկանոնական ուղիղ օրինաց նորա ի բացախօսն յայտնաբան ճիշտ ասացուածս ճշգրիտ հանդամանօք հաւաստի գրուցածն, քան զառանցեալ աղճատն այն ցնոր, որ ի վաղեմնին ունէր զովութիւն ընդ նախանիւթն ի Կովտիննեան երազովք։ Ի բաց առեալ զայս զառանցանս, որ խոհականն ոչ ունէր զկշիռ մտախորհուրդ քաջարթուն լրջութեամբ յիմանալի հայեցուածս տիեզերական քննութեան անդ։ Եվ զընդդեմ ընդդեմ վէճս արդի եվրոպեանց, որք ոչ խաղաղեցան երբեք ի թիւ հաշուի սկզբնամասանց նորա. մանաւանդ անտեղութիւն եղեւ նորա մինչեւ ցուցեալ յառաջադոյն ի չիակատարն բան զորպէս եւ էն, որ յինքեանն եւ թէ զի՞արդ ածուաս ի դոյ ի չգոյից մինչ անդրանիկն եղեւ ի նախագործ գործս արարչին սկսիլ ի մասանցն...»[16]

Այս հարցի վրա բավականին լույս է սփռում ՀՍՍՌ Մատենադարանի № 7257 ձեռագրում պահպանվող Ֆիզիկա Պողոսի «Խորհուրդ աշխարհի բնաբանութիւն ի նախանիւթն» խորագիրը կրող հոդվածը։ Հեղինակի նպատակն է պարզել «ի նախանիւթն աշխարհի զստոյգ պատճառս ճշմարտութեան եղելոց էիցն ի չէից. թէ զի՞արդ որք էնն եղեն» և թե «զի՞արդ քան զշրջանական շարժմանն աշխարհի ի նախայավիտեան տիեզերական շարժութեանն աներեւոյթ և անպատրաստ էր, ի ծոց ամբաւ տարածութեան հողագունդս այս համավիճակ երկիր մեր»[17]։ Աշխարհի առաջացումը Ֆիզիկա Պողոսը փորձում է բացատրել բնական ճանապարհով։ Նա գտնում է, որ ամբողջ տիեզերքում ցրված է եղել փոշենման նախանյութը ինչպես իր հոգեկան, այնպես էլ մարմնական որակավորումներով։ Այդ նախանյութից, ըստ Ֆիզիկայի, առաջացել է ամբողջ իրականությունը՝ իր նյութական և հոգեկան ոլորտներով։ Այս դեպքում նա հակվում է դեպի Կանտ-Լապլասյան միգամածությունների տեսությունը ու նրա դուալիստական մեկնությունը։ Իսկ երկնային սիստեմների, մասնավորապես արեգակնային սիստեմի առաջացումը բացատրում է պատահական անցնող մի գիսավորի ձգողական ուժի ազդեցության տակ կենտրոնական մարմնից որոշ մասերի անջատումով։ Այսպիսով, կոսմոգոնիայի հարցերում Ֆիզիկա Պողոսը բացահայտորեն հրաժարվում է հայ եկեղեցու կողմից ընդունված պատկերացումներից[18]։

---

15 Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Թորոս Ազատյանի արխիվ, 4-րդ բաժին, № 142, էջ 2ա—2բ։

16 Նույն տեղում։

17 ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 7257, երես 4ա—4բ։

18 Տե՛ս նույն տեղում, երես 4բ—5բ։

Իր տպագիր աշխատություններում Ֆիզիկա Պողոսը պաշտպանում է չորս տարրերի մասին ուսմունքը և գտնում, որ բնությունը կազմված է հողից, օդից, ջրից և կրակից։ Սակայն այս չի նշանակում, թե նա ծանոթ չէ էլեմենտների մասին գիտության տվյալներին[19]։ «Տրամաբանության» հրատարակիչն այս հարցի առնչությամբ տալիս է հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Ֆիզիգային հոս մինակ չորս տարերաց անունները տալուն մի նայիր. ուրիշ տեղ Եվրոպացվոց գտած 72 տարերաց վրայոք ալ պիտի խոսի երկարորեն. զանոնք ալ ժամանակին պիտի հրատարակեմ»։ Ֆիզիկա Պողոսը սիստեմատիկորեն հետևել է բնագիտության զարգացմանը ու փորձել է այնտեղից համապատասխան տեսական եզրակացություններ անել։ Բայց նա կարծում էր, թե հնարավոր է բոլոր տարրերը հանգեցնել նյութի այդ չորս տեսակներին։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում օբյեկտիվ իրականությունը, բնությունը մեկնաբանելու փորձը. Ֆիզիկա Պողոսի կարծիքով նյութական աշխարհը կարելի է դիտել երկու տեսակետից. «մին ի կարգի տարերաց, իսկ միւսն՝ ի կարգի գոյացութեանց»[20]։ Այստեղ նա բնությունը ուսումնասիրում է ըստ կառուցվածքի, այսինքն՝ ըստ բաղադրիչ մասերի և ըստ բնության առարկաների, երևույթների լինելության, առաջացման, զարգացման ու քայքայման պրոցեսի, ըստ շարժման։

Ֆիզիկա Պողոսը տարրերի հատկությունն է համարում ինչպես նրանց համատարած և նյութական մարմինների առաջացման հիմք լինելը, այնպես էլ նրանց հավիտենականությունն ու անփոփոխականությունը[21]։ Տարրերը բնութագրելիս նա ելնում է շարժման համընդհանրության սկզբունքից և գտնում է, որ տարրերը հանդիսանում են ինչպես բնության բազմազանության առաջացման հիմքը, այնպես էլ աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների պատճառը։ Ըստ նրա, անփոփոխ տարրերը, ստեղծագործվելուց հետո, մտնում են որոշակի կապակցությունների մեջ, դրանով իսկ պատճառ դառնալով բնության կոնկրետ իրերի առաջացման, փոփոխման ու քայքայման։ Այս ճանապարհով առաջացած բնության բազմազանությունը, ըստ նրա, կարելի է անվանել էակ, նյութ, մարմին, իր, որոնց համար բնորոշ է համարում՝ «սերմնական բեղմնավորութեամբ աճիլ, և ձևերով սահմանավորեալ չափով ըլլալ, և ամեն տեղ չգտնուիլ, բայց միայն ի սահմանավոր տեղի ու նորանոր ծննդեամբ աճիլ ու եղծմամբ ոչնչանալ և ժամանակի ներքև ըլլալով յարաշարժութեամբ ծնանիլ և ապականիլ»[22]։ Այսպիսով, Ֆիզիկա Պողոսը նյութի համար բնորոշ է

---

19 «Տրամաբանութիւն», էջ 40 (ծանոթ.)։ Մենք հնարավորություն չունենք մանրամասն խոսելու տվյալ հարցի վերաբերյալ Ֆիզիկա Պողոսի հայացքների մասին, քանի որ հրատարակչի խոստումը չի իրականացվել։ Բայց վերոհիշյալ փաստը վկայում է, որ Ֆիզիկա Պողոսը ծանոթ է եղել իր ժամանակի բնագիտական նվաճումներին և փորձել է օգտագործել դրանք փիլիսոփայության մեջ։ Եվ այդ պատահական չէ։ Արդեն XIX դարի 40-ական թվականներին հայ բնագիտական մտքի ներկայացուցիչները դիտական չէին համարում չորս տարրերի մասին ուսմունքը։ Նրանք գտնում էին, որ հողը, ջուրը և այդ կարգի այլ մարմիններ դիտության զարգացման հետևանքով այլևս տարրեր չպետք է համարվեն, այլ «իրենց կազմիչ մասերուն բաժնելով հիմա յոդվածո մարմիններուն կարգի տակը կիյնան» (Մ. Սաղաթելյան, Համառոտ բնական դիտություն, Վիեննա, 1842, էջ 24)։

20 «Տրամաբանութիւն», էջ 38։

21 Տե՛ս նույն տեղում, էջ 39։

22 Նույն տեղում, էջ 38—39։

համարում նախ հավիտենական շարժման մեջ լինելը և ապա՝ տարածականությունը։

Չկարողանալով ճիշտ հասկանալ և բացատրել շարժման բուն պատճառի, աղբյուրի հարցը, Ֆիզիկա Պողոսը գտնում է, որ շարժումը նյութին փոխանցվել է աննյութական և հավիտենական մի ուժի կողմից։ Սակայն կոնկրետ նյութի շարժումը բացատրելիս նա դիմում է ոչ թե այդ աննյութական ուժի օգնությանը, այլ նյութի տարրաբանական կառուցվածքի մեջ տեղի ունեցող փոփոխությանը։ Ֆիզիկա Պողոսի հայացքները շարժման վերաբերյալ չեն սահմանափակվում Արիստոտելի «շարժում», «քանակ», «որակ», «գոյ» կատեգորիաների մեկնաբանությամբ, մի բան, որ բնորոշ էր նախորդ մի շարք հայ մտածողների համար։ Նա շարժման հարցը դնում է ավելի լայն ձևով և աշխատում այն լուծել ժամանակի բնագիտական հայտնագործությունների, հասարակական կյանքի փոփոխությունների լույսի տակ։ Այս պատճառով էլ նրան հաջողվում է դուրս գալ շարժման մասին ընդունված սխեմաների սահմաններից, իր տեսակետները ցուցադրելու համար կյանքից վերցնելով հետաքրքիր օրինակներ, անժխտելի փաստեր։

Ֆիզիկա Պողոսը ամենայն վճռականությամբ պնդում է, որ ամեն ինչ՝ թե՛ բնության երևույթները, թե՛ հասարակական կյանքը, թե՛ մարդկային իմացությունը, բաբոյականությունը, կրոնը և այլն, գտնվում է անընդհատ շարժման ու փոփոխման մեջ։ «Զի՛ք յաշխարհի ինչ՝ որ ո՛չ շարժիցի»[23],—հայտարարում է նա։

Շարժումը համարելով համընդհանուր երևույթ, նա փորձում է դասակարգել այն։ Նրա կարծիքով «Շարժումն տիեզերական կրկին է. է որ տեղական, և է որ գոյացական»[24]։ Տեղական շարժում ասելով նա ի նկատի ունի շարժման ամենապարզ ձևը՝ մեխանիկական շարժումը, երբ իրերի մեջ որակական և քանակական փոփոխություններ տեղի չեն ունենում. նրանք ենթարկվում են միայն հասարակ տեղափոխության։ «Շարժումն տեղական անփոփոխ յինքեան շարժի ի տեղւոջէ ի տեղիս. որպես թռչունք, նաւք, մարդիկ, ամպք, անձրևք, հեղեղք, բերք երկրի, և արհեստական գործուածք, մետաղք, մացառուտն»[25]։ Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում շարժման մյուս տեսակի՝ «գոյացական շարժման» մեկնաբանությունը, որը բխում է գոյացության մասին Ֆիզիկա Պողոսի ընդհանուր հայացքներից։ Գոյություն ունենալ, կոնկրետ կերպով դրսևորվել, ըստ նրա, նշանակում է առաջին հերթին շարժման մեջ գտնվել, անընդհատ փոփոխվել[26]։ Եթե գոյացությանը բնորոշ է շարժումը, ապա գոյացական շարժումը իրի որակի մեջ տեղի ունեցող փոփոխության, զարգացման ու աճման պատճառն է, որն իրականացվում է նյութի, կոնկրետ իրի մեջ տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով։ «Շարժումն գոյացական,—գրում է նա,—ուր նիւթական փոփոխութեամբ այլայլին մարմնականք ի տարազգի կերպարանս գոյից. որպես ազոխն ի խաղող, խաղողն ի գինի և ի ռուբ, մացառն՝ յածուխ, ածուխն ի հուր, հուրն ի մոխիր, ձուն ի ձագն... հունտք և սերմունք ի

23 «Ֆիզիկա Պողոս, Ատենաբանութիւն դպրոցական», «Աստղիկ Արևելյան», 1855, № 8, էջ 121։

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում։

26 Տե՛ս «Տրամաբանութիւն», էջ 38—39։

տունկս, ի բոյսս»[27]։ Այսպիսով, բնության մեջ բազմազանության առաջացումն ու փոփոխումը, գոյի տարազգի կերպարանքների առաջացումը պայմանավորված են գոյացական շարժմամբ։

Խորացնելով այս տեսակետը, Ֆիզիկա Պողոսը կռահում է, որ գոյացական շարժման ընթացքում իրը, կամ երևույթը, որոշ դեպքերում վերածվում է իր հակադրության, քանի որ տվյալ իրը ենթարկվում է էական, որակական փոփոխության։ «Շարժումն գոյացական՝ այլայլէ զնիւթական գոյութիւնս մարմնականաց, յեղափոխել ի նոյնութենէ նմանութեան ի տարազ կերպարանս ինչ աննմանութեան»[28]։ Այս դրույթը, սակայն, նա չի զարգացնում։ Համոզված լինելով, որ շարժումը տիեզերական է, Ֆիզիկա Պողոսը հանգում է այն եզրակացության, որ գոյացական շարժման ենթակա են ոչ միայն երկրային, այլև երկնային մարմինները՝ աստղերը, աստղերը և այլն[29]։

Գոյացական շարժման ընդհանուր ընթացքի մեջ նա տարբերում է երեք էտապ, երեք աստիճան, որոնք արտահայտում են իրերի ու երևույթների զարգացման տարբեր ու որոշակի աստիճանները[30]։ Ըստ Ֆիզիկա Պողոսի, զարգացման ամեն մի էտապ, «կարգ» հակադրվում է իր նախորդին, բացասվում նրա կողմից։ «Եվ է տարածական աստիճան ինչ ի նոսա (գոյացական շարժման—Է. Հ.) ի միագիծ հաջորդութիւն աճման, որպես հունտք և սերմունք. նախկին է ի նոսա տարածութիւն աճման աստիճանաց. արմատն, բունն, ոստն, տերևն, ծաղիկն, պտուղն, դարձեալ ի կատարած նոցա հունտ սկզբանն»[31]։ Ըստ էության նկատելով շարժման ընթացքում զարգացման աստիճանավորումն ու հաջորդականությունը, կապը, նա չի կարողանում ամբողջովին ճիշտ ըմբռնել դիալեկտիկայի այս օրենքի էությունը և, հակասելով իրեն, տուրք է տալիս շարժման ցիկլայնության տեսությանը, որը բնորոշ է մի շարք մետաֆիզիկ մտածողների աշխարհայացքին։ Այսուհանդերձ, չափազանց դրական երևույթ է այն, որ բնության իրերի ու երևույթների շարժման, զարգացման, քայքայման, մահացման այդ պրոցեսը Ֆիզիկա Պողոսը դիտում է որպես բնության «աննահանջ օրենք», որպես համընդհանուր օրինաչափություն։ «Աննահանջ օրէնս բնութեան յաշխարհի, է այլայլութիւնն յարաշարժ, կամ եղանակաւ գոյափոխ այլայլութեան, և կամ յեղանակաւ տեղափոխ շարժմամբ»[32]։ Կարևոր է նշել նաև, որ ըստ Ֆիզիկա Պողոսի՝ շարժման հետևանքով նյութը չի ոչնչանում, այլ ձևափոխվում է, մի վիճակից անցնում մի այլ վիճակի։ «Յարաշարժութիւն աշխարհի ոչ զմի ինչ կորուսանէ երբեք ի բովանդակեալ ամբողջական նոյնութենէ տիեզերական կազմութեան»[33]։

Ֆիզիկա Պողոսը շարժումը տարբերակում է նաև ըստ փոփոխման, զարգացման պատճառների։ Շարժումը կարող է լինել այնպիսին, երբ «մարմնականքն այլայլին նիւթական փոփոխութեամբ» և կամ այնպիսին, երբ երևույթները փոփոխվում են «բարոյական» գործոնների հետևանքով։ Այս հիման վրա

---

27 «Ատենարանութիւն», էջ 121։

28 «Ատենարանութիւն», էջ 123։

29 Տե՛ս նույն տեղում։

30 Տե՛ս նույն տեղում, էջ 122—124։

31 Տե՛ս նույն տեղում, էջ 122։

32 «Ֆիզիկա Պողոս, Հաստատուն դրութիւն անյեղծութեան հոգւոյն», «Աստղիկ Արևելյան», № 5, 1855, էջ 75։

33 Նույն տեղում։

շարժման բոլոր տեսակները նա բաժանում է երկու խմբի՝ «բնական» շարժում և «բարոյական» շարժում։ Վերջինս իր հերթին լինում է քաղաքական, կրոնական և արհեստական[34]։ Ուշագրավ է, որ քաղաքական փոփոխությունները նա փորձում էր կապել կրոնական փոփոխությունների հետ, պայմանավորել նրանցով[35], մի տեսակետ, որն արտահայտվել է նաև Ֆոյերբախի մոտ։ Համընդհանուր շարժումը, ըստ Ֆիզիկա Պողոսի, իրականացվում է որոշակի պայմաններում, պայմանավորված է զարգացող իրի որոշակի հատկություններով։ Այդ պայմաններից ու հատկություններից, տվյալ իրի, երևույթի բնորոշ օրինաչափություններից դուրս շարժումը անիրականանալի է։

* * *

Յուրաքանչյուր փիլիսոփայական ուսմունք, ըստ Ֆիզիկա Պողոսի, սերտորեն առնչվում է հոգու և մարմնի փոխհարաբերության հարցի որոշակի լուծման հետ։ Այդ տեսակետից նա բոլոր փիլիսոփաներին բաժանում է երկու մեծ խմբի, երկու ուղղության, որոնց հիմքը տեսնում է մի կողմից Արիստոտելի և մյուս կողմից՝ Պլատոնի հակադիր ուսմունքների մեջ։ «Իմաստասիրաց մեջ,—գրում է նա,—մինչ ցարդ իրաց գաղափարներուն վրայօք երկու կերպ կարծիք ունեցողներ եղան, թե հոգին մտաց իմացման մեջ ի՞նչպես է։ Ա) Պղատոնը եղավ, որ կհաստատեր, թե հոգին առանց բաղկացութեան մարմնոյ իր մեջ իրաց գաղափարաց ծանօթութիւնը առաջուց ունի. բ) Արիստոտել եղավ, որ Պղատոնի այս դրութիւնը բոլորովին կժխտեր և կհաստատեր, թե իրանց ծանօթութիւնները միայն զգայարանաց զգայութենէն մտաց մեջ գաղափար կձեվանան։ Եվ հոգին ծանօթութիւն մը չունի, կրսէր, քանի որ մարմնոյ հետ միավորված չէ, միայն թե զգայարանքները ինչ որ հոգւոյն կազդեն, անոնք են միայն մտաց գաղափարները»[36]։

Նկատելով Պլատոնի և Արիստոտելի իմացության տեսությունների տարբերությունը, Ֆիզիկա Պողոսը հակվում է դեպի հարցի լուծման արիստոտելյան այն տեսակետը, որի համաձայն հոգու և մարմնի միասնությունը իմացության հիմնական նախապայմաններից մեկն է։ Սակայն նրա կարծիքով հոգին մարմնից անկախ ինքնուրույն սուբստանցիա է, որի սպեցիֆիկ հատկությունն է իմացումը և շարժումը[37]։ Մարմնի հատկությունը նա համարում է տարածականությունը։

Հասկանալով, որ հոգեկանը չի կարելի նույնացնել նյութականի հետ, նա այստեղից հանգում է նյութականից անկախ հոգեկանի ինքնուրույն գոյության մասին իդեալիստական դրույթին։ Բայց դեկարտյան ֆիզիոլոգիայի և ժամանակի առաջավոր գիտության ազդեցության տակ նա առանձին դեպքերում հոգեկանը փորձում է բացատրել մատերիալիստորեն։ Ի տարբերություն կրոնական աշխարհայացքի, Ֆիզիկա Պողոսի կարծիքով մարդկային կյանքի, հիվանդության, առողջության և մարմնից հոգու անջատվելու պատճառը նյութական է։ Մարմինը չորս էլեմենտների որոշակի հարաբերակցության արդյունք է. բավական է, որ այդ նյութական էլեմենտների հարաբերակցությունը խախտ-

34 «Ատենարանութիւն», էջ 122։
35 Նույն տեղում, էջ 124։
36 «Տրամարանութիւն», էջ 58։
37 Տե՛ս նույն տեղում, էջ 52։

վի, մարմինը քայքայվի, որպեսզի տեղի ունենա հոգու անջատումը[38]։ Նա կռահում է, որ ոչ թե հոգին է կյանք ու կենդանություն տալիս մարմնին, այլ՝ ընդհակառակը։

Այս առաջադիմական տենդենցը Ֆիզիկա Պողոսը ավելի որոշակիորեն և հետևողականորեն անց է կացնում իր ֆիզիոլոգիական հայացքներում, մասնավորապես ուղեղի, ներվային համակարգի գործունեություններ բացատրելիս։ Այստեղ արդեն մի կողմ թողնելով նյութականից անկախ հոգու գոյության մասին իր իդեալիստական գրույթը, նա հոգեկանը դիտում է որպես մի կարողություն, որի իմացական ֆունկցիան իրականացվում է միայն նյութականի, այսինքն՝ ուղեղի, զգայարանների շնորհիվ։

«Ուղեղը,—գրում է նա,—ջղերուն նիւթական կազմութեան պատրաստուած խմոր մրն է։ Անկէ չորս կերպ զանազան գործիք կկազմվի մարմնոյն մէջ, որ կրսվին, նիւթ հիւսուածոյ, գործիք շարժման, գործիք զգացման, խողովակ հիւթաշարժ»[39]։ Ֆիզիկա Պողոսը գտնում է, որ մարմնի մեջ տեղի ունեցող բոլոր պրոցեսները պայմանավորված են ուղեղի, ներվային համակարգի հետ կապված այս չորս գործողություններով[40]։

Իր իմացաբանության մեջ Ֆիզիկա Պողոսը ելնում է արտաքին աշխարհի ռեալականության և այն ճանաչելու մարդու բանականության անսահման կարողությունների, հնարավորությունների մասին ճիշտ սկզբունքից։ Նա իմացաբանության կարևոր խնդիրն է համարում այն հարցերի պարզաբանումը, թե ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով է ճանաչում մարդը արտաքին աշխարհը։ Ի՞նչ դեր են խաղում այդ պրոցեսում զգայությունները և մտածողությունը. արդյո՞ք մեր բոլոր գիտելիքների աղբյուրը զգայություններն են, թե՞ միտքը, զգայություններից անկախ՝ կարող է ճանաչել արտաքին աշխարհը։ Այս հարցերը լուծելիս Ֆիզիկա Պողոսը փորձում է չկրկնել նախորդ հայ փիլիսոփաներին, ձգտում է իր լուման մտցնել իմացաբանության մեջ։ Աշխատելով մի կողմից հարազատ մնալ հայ փիլիսոփայության լավագույն տրադիցիաներին, հատկապես այն առաջավոր ուսմունքներին, որոնք ընդգծում էին մեր գիտելիքների փորձնական ծագումը, Ֆիզիկա Պողոսը իր իմացաբանությունը ուղղում է սենսուալիզմի հունով, բայց չբավարարվելով այդ հայացքներով, նա փորձում է համակցել էմպիրիզմի և ռացիոնալիզմի հակադիր սկզբունքները՝ հակվելով դեպի Կուզենի էկլեկտիկական փիլիսոփայությունը։

Լինելով ճշմարտության երկակիության ուսմունքի կողմնակից, Ֆիզիկա Պողոսը գտնում է, որ մեր իմացության աղբյուրը արտաքին, օբյեկտիվ աշխարհն է, նրա ճանաչման միակ միջոցը՝ զգայությունները։ Բնական գիտությունների ձեռք բերած բոլոր ճշմարտությունները, ըստ նրա, «զգայութենէն մտքին մէջ կանցնին»[41]։ Շարունակելով իր այս միտքը, նա պնդում է, որ «ամենն իմացմունք, որոնք որ մտքին մէջ են, հոն միայնակ զգայարանքներէն կրժողովին, որուն անհնարին է առանց զգայարանաց բան մը իմանալ[42]։ Նախքան մեր զգայարանների վրա արտաքին առարկաների ազդելը մեր գիտակցու-

38 Նույն տեղում, էջ 67։

39 «Ֆիզիկա Պողոս, Համառօտ տեղեկութիւն ուղեղին վրայ (ուղեղն)», «Աստղիկ Արևելյան», 1885, № 6, էջ 90։

40 Նույն տեղում։

41 «Տրամաբանութիւն», էջ 42։

42 Նույն տեղում, էջ 54։

թյան մեջ այդ առարկաների մասին ոչ մի գիտելիք չկա, դրանք «զգայարանքներուն զարգացումէն վերջը կը յայտնուին»[43], այսինքն, «ի զգայարանաց անտի է, որոնք իրը թէ զանոնք ցուցնելու յայտարարներն են, թէ անոնք ի՞նչ բրեր են, ինչ որպիսութիւններ ունին, և թե ի՞նչ գործողութիւններ կրկատարեն»[44]։ Այսպիսով, Ֆիզիկա Պողոսը որոշակիորեն ընդունում է իմացաբանության սենսուալիստական սկզբունքը, որտեղ նկատելի են մատերիալիստական տարրեր։ Պետք է նշել, որ Արիստոտելի, Լոկի, Կոնդիլյակի սենսուալիզմի պաշտպանության և կիրառման տեսակետից Ֆիզիկա Պողոսը XIX դ. առաջին կեսի հայ փիլիսոփաների մեջ եզակի դիմք չէր։ Մատերիալիստական սենսուալիզմը հետևողականորեն իրենց աշխատություններում անց էին կացնում Գր. Փեշտիմալճյանը, Նիկ. Զորայանը, Ա. Փափովիչը և այլ առաջավոր մտածողներ։ Փեշտիմալճյանը ընդունելով, որ բնածին գաղափարներ չկան, նշում է, որ «Հոգին զոր ինչ մի անգամ ըմբռնեն և զատէ և խորհրդածէ, զսկիզբն ի զգայութեանց ունի. զի ըստ անշուշտ առածին Արիստոտելի, Չի՛ք ինչ ի միտս, որ չիցէ նախ լեալ ի զգայութեան»[45]։ Նույն միտքը ընդգծված ձևով արտահայտում է նաև Զորայանը։ «Միտքը,—նրա կարծիքով,—մարմնական զգայարանաց միջոցով նյութական աշխարհի հետ սերտ կերպով մը կապված, անոնցմե ամեն կերպ տպավորություններ կառնե, անոնցմե գաղափարներ կկազմե, հետո անոնք իրարու խառնելով անոնցով նորանոր բաներ կհնարե»[46]։

Զգայության, որպես հոգեկան երևույթի, առաջացումը, ըստ Ֆիզիկա Պողոսի, պայմանավորված է արտաքին առարկաներից՝ մեր զգայարանների վրա ունեցած ներգործությամբ։ «Զգայարանաց ազդարարութիւնը արտաքին իրաց շարժումն է, թէ այն իր բլլայ և թէ իրին որպիսութիւնը և թէ որպիսութեան գործը»[47]։ Ֆիզիկա Պողոսը հետևյալ ձևով է բացատրում արտաքին առարկայից ստացված զգոի գիտակցության փոխարկվելը. «Զգերուն մէջէն մեկ ծայրը ուղեղին միջավայրն է. որ կրսվի կետ տեսութեան ծայր սկզբան։ Եվ միւս ծայրը՝ զգայարանաց մէջ կրդադարի, որ կրսվի կետ հայեցուածոյ և ծայր կատարածի։ Այս ծայր կատարածիին մէջ իմանալի ոգելից էութիւնը՝ կետ հայեցուածոյին մէջ կրավորակերպ կշարժի արտաքին իրաց ներգործական ազդեցութիւններէ. ու ան ատեն ջղաց մէջ եղած տարածեալ զորութիւնը դեպի ուղեղն սեղմվելով. կետ տեսութեանին մեջ կրտպավորի։ Եւ անկէ նորէն յետադարձ բլլալով կրկին կտարածի դեպ ի զգայարանքը. որ կրսվի ներքին անդրադարձութիւն»[48]։ Այսպես է պատկերացնում Ֆիզիկա Պողոսը ուղեղի ռեֆլեկտոր գործունեությունը։

Զգայությունները Ֆիզիկա Պողոսը բաժանում է երկու խմբի՝ «կերպավոր զգացումներ» և «անկերպ զգացումներ»։ Բաժանման հիմքն այն հատկանիշն է, թե այդ զգացումները ինչքանով ճիշտ և լրիվ են արտացոլում զգայարանների վրա ներգործող առարկայի պատկերը։ Եթե «Կերպավոր զգացումը» այն է, «որով հոգին զգայարանաց շարժմամբը կիմանայ իրերուն իսկութիւնը, անոնց

43 «Սուրհանդակ», 1906, Կ. Պոլիս, № 2254, «Հատուածներ Ֆիզիկա Պողոսի գործերէն»։

44 «Տրամաբանութիւն», էջ 54։

45 Գրիգոր Փեշտիմալճյան, Տրամաբանութիւն, կամ արուեստ բանական, 1854, էջ 13։

46 Նիկողայոս Զորայան, Ընթերցասիրություն, 1852, Կ. Պոլիս, էջ 2։

47 «Տրամաբանութիւն», էջ 54։

48 «Ֆիզիկա Պողոս, Համառոտ տեղեկութիւն մտաց վրայ (միտք)», «Աստղիկ Արևելյան», 1855, էջ 91։

որպիսութեան հանգամանքներովը մէկ տեղ»[49], ապա «անկերպ» զգացման ժամանակ «թեպետ հոգւով կիմանամք զգայարանաց շարժումը, բայց կանգիտանամք խորհրդով մեր իմացման մեջ—անոր պատճառը, թե մեր հոգիին ի՞նչ ազդել կուզե»[50]։ Զգայությունները, ըստ Ֆիզիկա Պողոսի, հանդես են գալիս ոչ միայն որպես արտաքին աշխարհի առարկաների ազդեցության հետևանք, այլև որպես նրանց արտացոլումներ, պատկերացումներ։ Այս նշանակում է, որ նա զգայությունները դիտում է որպես մարդուն արտաքին աշխարհի հետ կապող օղակ։ Զգայության էության այսպիսի ըմբռնմամբ Ֆիզիկա Պողոսն իրեն սահմանազատում է զգայության սուբյեկտիվ իդեալիստական և ագնոստիկական ըմբռնումներից և փորձում է զգայության հարցին տալ ավելի գիտական մեկնաբանություն։ Այս ավելի ակներև է դառնում, երբ նա առաջադրում և լուծում է զգայարանների և նրանց օբյեկտների փոխհարաբերության հարցը։ Նա որոշակիորեն գտնում է, որ մարդկային հինգ զգայարանների գոյությունը և գործունեությունը անմիջական պայմանավորվածության մեջ են գտնվում օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկաների հատկանիշների հետ։ Այնպես, ինչպես «իրաց ճշմարտութեան արտաքին հանգամանքները հինգն են», այնպես էլ «իրերուն հինգ հանգամանաց ճշմարտութեանը համեմատ մեր վրա հինգ տեսակ զգայարանք կան»[51]։ Ուրեմն, զգայությունների գոյությունը պայմանավորված է ոչ թե ինչ որ հոգու գոյությամբ, այլ օբյեկտիվ աշխարհով[52]։

Սակայն մարդկային իմացությունը, ըստ Ֆիզիկա Պողոսի, մի շարք պատճառներով չի կարող սահմանափակվել զգայական աստիճանով, զգայական ճանապարհով ձեռք բերած գիտելիքներով։ Նախ՝ իմացության նպատակը էության ճանաչումն է, որը անմիջական, զգայական ճանապարհով մեզ չի տրվում, նրա մասին զգայարանների միջոցով մենք գիտելիք ունենալ չենք կարող. «Տեսութիւն աչաց տկարանայ տեսանել ինչ յանգիտութեան գաղտնիսն, որք թէ ծածկեալք ի մթավայրս իցեն»[53]։

Երկրորդ գիտական իմացության համար երևույթների պատճառական կապերի բացահայտումը առաջնահերթ նշանակություն ունի, մինչդեռ զգայական ճանաչողության միջոցով, ըստ Ֆիզիկա Պողոսի, մենք գիտելիք ենք կազմում իրերի միայն արտաքին հատկանիշների, արտաքին կողմերի մասին։

«Զգացմունքը իրերը միևնակ հանգամանքով յայտնի կընեն, և չկայ զգալի նշան մը զանազանութեան ցուցման մեջ, իրին հետ, որպիսութեանց հետ, պատճառաց, գործոց ու անոնց կարգաց հետ»[54]։ Այնուհետև, չի կարելի անվերապահորեն ճշմարիտ համարել զգայական տվյալները։ Զգայարանները երբեմն ճիշտ չեն արտացոլում իրերը և նրանց հատկանիշները։ «Միևնակ զգայարանաց

---

49 «Տրամաբանութիւն», էջ 82։

50 Նույն տեղում։

51 Նույն տեղում, էջ 84։

52 Առարկաների որոշակի հատկությունների համեմատ մարդու համապատասխան զգայարանների գոյության մասին մտքին կարելի է հանդիպել տվյալ ժամանակաշրջանի նաև այլ մտածողների մոտ։ Սակայն նրանցից ոմանք ընդգծում էին, որ այդ համապատասխանությունը աստծո կողմից է հաստատված։ (Տե՛ս Հ. Ստեփանյան, Տեսարան աշխարհի, 1810, Վենետիկ, էջ 333)։

53 «Տրամաբանութիւն», էջ 33։

54 Նույն տեղում, էջ 63։

ազդարարությանը ապավինիլ չըլլար, որոնց սխալմունքը շատ են»[55]։ Այս պատճառով էլ նրանք կարող են մոլորության աղբյուր հանդիսանալ. «շատ անգամ զգայարանքները իրաց իսկութիւնը սխալ իմանալովը՝ միտքը կշլացնեն»[56]։

Նկատելով զգայական իմացության սահմանափակվածությունը, Ֆիզիկա Պողոսը իր առջև խնդիր է դնում լուսաբանել իսկական, գիտական իմացության աղբյուրի և մտածողության ու զգայական տվյալների հարաբերակցության հարցը։ Նա նկատում է, որ որակական տարբերություն գոյություն ունի զգայական իմացության և աբստրակտ մտածողության միջև։ Նրա կարծիքով իմացության տրամաբանական աստիճանը իմացության բարձրագույն և կատարյալ աստիճանն է. «Իրաց իսկութիւնը որոշելու համար զգայարանաց վրիպակները ընտրելով կզօրանայ միտքը»[57]։ Եթե զգայական իմացության միջոցով, ըստ նրա, մենք ճանաչում ենք միայն երևույթը, ապա աբստրակտ մտածողությունը մեզ գիտելիք է տալիս առարկաների էության մասին. «Միտքը ի խոյզ քննութեան մտնելով,—գրում է նա,—ասոնց (իրերի—է. Հ.) ճշտութիւնը մեզի կազդե»[58]։ Եթե զգայական իմացության միջոցով հնարավոր է ճանաչել միայն եզակի առարկան, ապա մտածողության օգնությամբ մարդիկ արտացոլում են ընդհանուրը։ Անցումը մասնավորից դեպի ընդհանուրը, ըստ Ֆիզիկա Պողոսի, պայմանավորված է մտածողության այնպիսի գործունեությամբ, ինչպիսին է «հրաժարեցուցումն», «վերացուցումն» և «վերրմբռնումն», այլ խոսքով՝ աբստրահման և ընդհանրացման կարողությամբ[59]։ «Շատ մասնավորներուն հավասարեալ հանդամանքները հրաժարեցնելով, որպես թևը և թռչիլը աղավնիէն. ագռավէն, արծիվէն և այլոցմէն հրաժարեցնելով մեկ իմաստի մեջ կրժողվե. այս է՝ թեավորն թռչի, որ վերացումն կրսվի»[60]։ Հաջորդ աստիճանը «վերրմբռնումն» է։ Մյուս էտապում միտքը կատարում է ընդհանրացում. «Կետ տեսութեանին մէջ,—նշում է նա,—միտքը այս մեկ ընդհանուր գաղափարաւ շատ ցրուեալ զատական մասնավորները կիմանայ, իբր թէ նույն թռչուն իմացման յատկութիւնները ամենքն ալ ունին. թեև անոնց վրա զգալի եղանակաւ միահազոյն երկուրն ալ չի զգայ, միայն թէ, կամ նմին պատշաճեալ գոյութեան անունը միայն լսելով, և կամ թև անծանոթ գոյութեան վրա վերացուցման իմաստից երկուքէն մեկը զգալով՝ այսինքն է կամ թևը և թռանիլը՝ կիմանայ միով միւսոյ. թէպէտ մին շարժեալ իցէ ծանօթագոյն իմացմամբ, և միւսն դադարեալ անծանոթ իմացուածով»[61]։ Ակներև է, որ Ֆիզիկա Պողոսը չի ժխտում հասկացությունների կազմավորման օբյեկտիվ հիմքը։ Միտքը, նրա կարծիքով, արտացոլում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկաների ընդհանուր հատկանիշները և այդպիսով կապվում իրականության հետ, հանդես գալով որպես արտացոլման բարձրագույն ձև։ Աբստրակցիայի մասին այս կարգի ուսմունքը ենթադրում է, որ մտքի մեջ նախօրոք չեն կարող տրված լինել իրերի գաղափարները. նրանց ծագումը, առաջացումը անմիջականորեն կապված է զգայական ըմբռնումների հետ։

55 Նույն տեղում, էջ 44։
56 Նույն տեղում, էջ 43։
57 «Տրամարանութիւն», էջ 44։
58 Նույն տեղում, էջ 58—59։
59 Տե՛ս «Համառոտ տեղեկութիւն մտաց վրայ (միտք)», էջ 92։
60 Նույն տեղում։
61 Նույն տեղում։

Սակայն Ֆիզիկա Պողոսը հետևողականորեն չի զարգացնում իր իմացաբանական այդ ճիշտ տեսակետը և որոշ չափով թեքվում է դեպի կանտականությունը։ Ճիշտ է, նա չի ժխտում, որ մտածողության գործունեության համար մեր զգայարանների վրա արտաքին իրերի ազդեցությունը անհրաժեշտություն է, բայց նա կարծում է, որ միտքը «զգայարանաց ազդեցութիւնը մէկդի թողլով ինքնիրեն պատճառներուն վրայօք մտադիր կըլլայ գործողութեան մէջ»[62]։ Որոշակիորեն հակադրվելով Արիստոտելին, նա գրում է. «Եթէ միայն զգայարանաց զգացմունքներէն մտքին մէջ գաղափարեալ ծանօթութեանց ճանաչմունքն ըլլային, ըստ Արիստոտելի, մտաց մէջ գաղափարները ի՞նչպես կըլլային, համեմատեալ զանազանութիւնը ընտրելու կողմանէ, իրին ու հանգամանաց մէջ, կարգաց ու ընտրութեանց մէջ, պատճառաց ու գործոց մէջ»[63]։

Այսպիսով, չկարողանալով հասկանալ զգայականի և բանականի փոխադարձ կապը, դիալեկտիկական միասնությունը, բայց նկատելով զգայականի սահմանափակվածությունը, Ֆիզիկա Պողոսը հանգում է սխալ եզրակացության, թերագնահատում զգայական ճանաչողության դերը իմացության պրոցեսում։ Սրանում էլ հենց արտահայտվում է Ֆիզիկա Պողոսի իմացաբանության իդեալիստական տենդենցը, որն ավելի ակնառու է դառնում պատճառականության կատեգորիան բացատրելու ժամանակ։ Այստեղ նա բացահայտորեն ժխտում է փորձի տվյալների անհրաժեշտությունը ընդհանուր գիտելիքների ձեռք բերման պրոցեսում և կանգնում ռացիոնալիզմի, ապրիորիզմի դիրքերում։ Նույն հայացքն է պաշտպանում նաև Ն. Ռուսինյանը։ Ինչքան էլ զգայական տվյալներն անհրաժեշտ լինեն իմացության պրոցեսում, Ֆիզիկա Պողոսի պատկերացմամբ մարդկային գիտակցության մեջ իրերի էությունը տրված է նախօրոք, և մտածողության դերը վերջին հաշվով հանգում է ոչ թե զգայական տվյալների վերամշակմանը, այլ արդեն տրված էությունից առարկայի գաղափարը բխեցնելուն։ «Էպէտ կերպավորեալ զգացմունք մտքին մէջ զգայարանքներէն կծագին, բայց յարմարներու ու անյարմարներու մէջ ընտրութեան զորութեամբը՝ իմացուածոց իրարմէ զանազանութիւնը, թէ ընդհանրոյ և թէ մասնավորի, թէ բնականի և թէ բնազանցականի մասին... հոգին իր մէջ սկզբէն ի վեր իրմէն՝ իմացող էակի պէս իր էութեանը հետ ունի՝ առանց զգայարանաց իրաց իմացմունքները նկարուելու»[64]։

Ֆիզիկա Պողոսի կարծիքով իրերի, երևույթների պատճառի իմացությունը չի կապված մարդկային փորձի հետ. «Թէպէտ և հոգին զգայարանքներէն կծանօթանայ թէ եղեգը ջրին երեսը կըմնայ,—ասում է նա,—բայց եղեգին ջրին տակ չըսուզելուն պատճառաց ընտրութիւնը՝ սկիզբէն ի վեր ինքնիրեն ունի, թե եղեգին մեջի օդալից պարապութիւնը, ջրին երեսը մնալուն պատճառն է»[65]։ Իհարկե, եղեգի ջրի տակ չսուզվելու պատճառը անմիջականորեն չի տրվում, բայց այդ չի նշանակում, թե դրա իմացությունը, մտածողությունը, «սկիզբեն ի վեր ինքնիրեն ունի»։ Ֆիզիկա Պողոսը չի հասկանում, որ յուրաքանչյուր անհատի գիտելիք հիմնված է ոչ միայն տվյալ անհատի փորձի վրա, այլև ներառում է նախորդ սերունդների բազմադարյան փորձը։ Չկարողանալով դիալեկտիկան կիրառել իմացության թեորիայում և չհասկանալով պրակտի-

62 «Տրամաբանութիւն», էջ 60։
63 Նույն տեղում, էջ 63։
64 Նույն տեղում, էջ 64։
65 Նույն տեղում, էջ 55։

կայի դերը իմացության պրոցեսում, նա չի կարողանում լուծել զգայականի և բանականի հարաբերակցության հարցը։

Մտածողության, որպես գիտելիքների ձեռք բերման հավաստի աղբյուրի մասին Ֆիզիկա Պողոսի վերոհիշյալ ըմբռնումներից բխում է նրա ուսմունքը տրամաբանության մասին։ Գերագնահատելով աբստրակտ մտածողության դերը իմացության պրոցեսում, նա հասկանալի է, չէր կարող չընդգծել գիտությունների սիստեմում տրամաբանության ունեցած հատուկ դերն ու նշանակությունը։ Ֆիզիկա Պողոսը տրամաբանությունը դիտում է որպես բնության երևույթների իմացության զենք, իրականության ճանաչման, ճշմարտության հայտնագործման մեթոդ։ «Տրամաբանութիւնը գիտութիւն մի է, որ իրաց ճշգութեանը համեմատ միտքը կուղղէ, ճշմարտութիւնը ճանչնալու համար»[66]։ Նա գտնում է, որ մարդիկ ճշմարիտ գիտելիքներ ձեռք բերելու համար պետք է առաջնորդվեն տրամաբանության կողմից բացահայտված ու սահմանված որոշակի օրենքներով ու կանոններով։ Թեև իմացաբանության մեջ Ֆիզիկա Պողոսը հակված է դեպի ռացիոնալիզմը, այսուհանդերձ, նա փորձում է կապ տեսնել մտածողության օրենքների և մարդկային փորձի մեջ. «Իրաց ճշգութիւնը իմանալու համար իմաստունները դարուց ի դարս փորձերով կանոնական օրենք հաստատեցին, որպես թե իրերը մտաց շիտակ կշռող կշեռքի մեջ ըլլան, դի մենակ զգայարանաց ազդարարութեանը ապավինել չլար, որոնց սխալմունքը շատ են, ուրեմն պետք է այն կանոններուն վրա հաստատեն, որով պարզ քննութեամբ մը իրերը յայտնուին, ահա այս է այն կանոնական օրենքը. որ կկոչուի տրամաբանութիւն. զանի փորձ առնելով, միտքը իրերը քննելու ատեն անոնց ճշմարտութիւնը գիտնալու համար պիտի գիտե թե համեմատութեան կշեռքին մեջ ինչպես անսխալ կրնայ ըլլալ, որով իրաց իսկութիւնը որոշելու համար, զգայարանաց վրիպակները ընտրելու կզորանայ միտքը»[67]։ Տրամաբանության, բանականության դերի այսպիսի ըմբռնումը, որը ի դեպ, պաշտպանում էր նաև Զորայանը[68], XIX դարի առաջին կեսի հայ իրականության մեջ չափազանց պրոգրեսիվ հայացք էր, քանի որ ուղղված էր իշխող դաղափարախոսության այն ռեակցիոն հայացքի դեմ, թե ճշմարտությունները չեն հայտնագործվում, այլ հայտնվում են աստծո կողմից և տրամաբանական ապացուցման կարիք չունեն, ու չպետք է ենթարկվեն բանականության քննությանը[69]։

Տրամաբանությունը գիտություն է ճիշտ մտածողության օրենքների մասին, այն, Ֆիզիկա Պողոսի արտահայտությամբ՝ «ուղղադատության» պաշտոն է կատարում։ Այս հատկանիշը տրամաբանության սպեցիֆիկ հատկանիշն է։ «Եվ ոչ այլ որ ի թուոյ իմաստասիրական մատենից կարդի երբէք ընդ այս պաշտօն ուղղադատ, հարթ և հավասար ի բաց մերժել զտարակոյս իմացուածս կասկածելի մթութեանց, քան զպանծալին ի գիտութեանց Տրամաբանութիւնն կանոնազարդ»[70]։ Տրամաբանությունը նույնացնելով փիլիսոփայության, ավելի ճիշտ՝ իմացաբանության հետ, նա դիտում է այն որպես մի «անսխալ կշեռք»,

66 «Տրամաբանութիւն», էջ 44։
67 Տե՛ս նույն տեղում։
68 Ն. Զորայան, Ընթերցասիրութիւն, էջ 7—9, 274—280։
69 Տե՛ս Նրնակ, 1869, էջ 45։
70 «Տրամաբանութիւն», էջ 33։

որը հանդես է գալիս ճշմարտության միակ և իսկական չափանիշի դերում[71]։ Իր այս տեսակետով Ֆիզիկա Պողոսը կրկնում է նախամարքսյան այն փիլիսոփաներին, որոնք ճշմարտության չափանիշը փնտրում էին սուբյեկտի մեջ, իմացող էակի գիտակցության մեջ և բացարձականացնելով մտածողության օրենքների դերը, չէին տեսնում, որ այդ օրենքներն ու կանոնները իմացության պրոցեսում կարողանում են ճշմարտության չափանիշի դեր կատարել շնորհիվ պրակտիկայի հետ ունեցած իրենց անխզելի կապի։

Ֆիզիկա Պողոսը գրել է փիլիսոփայական բազմաթիվ աշխատություններ. «Տրամաբանություն ընդարձակ», «Տրամաբանություն կրոնական գիտելյաց վրա», «Մատյան օրինաց ընդարձակ», «Խորհուրդ աշխարհի ընդարձակ», «Հաչելի ճշմարտության», «Աստեղաբանություն իմաստասիրական», «Հրավեր իմաստության», «Տրամաբանություն գործնական» և այլն։ Այս գործերը ձեռագիր վիճակում մինչև 1876 թվականը պահվել են Մ. Սիմոնյանի մոտ, որը հրատարակելով «Ընդարձակ տրամաբանության» առաջին հատորը խոստանում է տպագրել Ֆիզիկա Պողոսի բոլոր գործերը։ Սակայն հրատարակության հետ կապված ծախսերը նրան հնարավորություն չեն տալիս իրականացնելու այս խոստումը։ Թե հետագայում ո՞ւմ է հանձնվում այդ ձեռագրերը, ինչ բախտի են նրանք արժանանում՝ մեզ անհայտ է։ Ձեռագրերի վերնագրերից կարելի է ենթադրել, որ դրանք հետաքրքիր բովանդակություն ունեն և կարող էին ամբողջական պատկերացում տալ Ֆիզիկա Պողոսի փիլիսոփայական և հատկապես տրամաբանական և իրավագիտական հայացքների մասին։ Օրվանդ Ստյանը, որը ծանոթ էր Ֆիզիկա Պողոսի ստեղծագործություններին, անտարակույս, բավարար հիմք ուներ, երբ պնդում էր, թե Ֆիզիկա Պողոսը իր «Ընդարձակ կանոնագրքով» հանդես է գալիս որպես «օրենսգետ-բարոյագետ մր. արժանի նախակարապետ Ռուսինյանի և Նիկ. Պալյանի»[72]։

Ֆիզիկա Պողոսը որոնող մտածող էր։ Զգալով կղերա-ֆեոդալական տիրապետող դաղափարախոսության անհամապատասխանությունը ժամանակի ոգուն ու պահանջներին, նա աշխատել է գտնել իսկական ճշմարտություններ, փորձել է գրոհել ամիրաների և թուրքական կառավարության շահերը պաշտպանող դաղափարախոսության վրա։ Նա դգալի դեր է կատարել XIX դ. առաջին կեսի հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ, գոյաբանական և իմացաբանական հարցերում առաջադրելով նոր դրույթներ ու դաղափարներ, որոնք անհամատեղելի էին կրոնական աշխարհայեցողության հետ։ Ֆիզիկա Պողոսի փիլիսոփայական հայացքներում նկատվող անհետևողականությունն ու հակասականությունը պայմանավորված են տվյալ ժամանակաշրջանի հայ իրականության տնտեսական և քաղաքական պայմաններով, և առանձնապես այն հոլածանքներով, որին ենթարկվում էր այդ աղատախոհ մտածողը։

---

71 Տե՛ս նույն տեղում, էջ 34։

72 Մասիս, 1892, էջ 288։

Эд. Ш. Арутюнян

Философские взгляды Погоса Меликшахяна (Физика-Погоса)

Резюме

Физик-Погос (1788—1855) принадлежит к числу тех прогрессивных западноармянских мыслителей, которые принимали активное участие в классовой и национально-освободительной борьбе ремесленников, крестьян и других угнетенных слоев султанской Турции.

Поняв несоответствие клерикально-феодальной идеологии духу и требованиям своего времени, он критикует господствующее мировоззрение и стремится найти подлинную истину, подыскать методы и средства к достижению и осуществлению ее. Хотя этого он не смог добиться полностью, тем не менее ему удалось расшатать устои этого мировоззрения.

Являясь выходцем из беднейших слоев населения, он с величайшей энергией отдается самостоятельному изучению естествознания и философии. Проявляя большие способности и одаренность, уже в молодости он приобретает широкую популярность и удостаивается прозвища — псевдонима «Физик».

За активное участие в выступлениях организаций ремесленников, боровшихся против патриарха, эмиров, за прогрессивные антиклерикальные взгляды, он дважды был подвергнут аресту.

Наряду с плодотворной педагогической деятельностью, Физик-Погос написал множество философских трудов, из которых, к сожалению, до нас дошли лишь отдельные труды.

Важнейшими из философских проблем, которые больше всего привлекали его внимание, являются проблемы возникновения и существования мира, сущности движения, его видов, соотношения чувственного и рационального в процессе познания, а также общие вопросы логики.

Не отрицая существования бога, Физик-Погос считает, что богом созданы были лишь первоначальные элементы, сочетание которых составляет многообразие мира. Характерными признаками конкретных вещей и явлений, в отличие от их образующих элементов, являются их вечное движение, изменение и уничтожение.

Физик-Погос признает всеобщий характер движения: «Нет ничего в мире, что бы не находилось в движении». Движение, с его точки зрения,— нельзя свести к простому перемещению. По его мнению, есть и такие формы движения, в результате которых вещи претерпевают существенные, качественные изменения. Замечая преемственность, связь и отрицание в процессе развития, он однако не сумел дойти до правильного понимания закона отрицания отрицания, отдавая дань теории цикличности. Положительным в его понимании движения является также его мысль о том, что в результате его ничего в мире не исчезает.

В теории познания Физик-Погос исходит из реальности внешнего мира и безграничной возможности человеческого разума познать его. При решении проблемы соотношения чувственного и рационального замечаются две тенденции: придерживаясь принципа сенсуализма, он считает, что в основе наших знаний лежит ощущение. Подчеркивая связь психического с его материальным субстратом, с мозгом, отмежеваясь от субъективно-идеалистического понимания ощущения, он своей философии дает материалистическое направление. Однако, замечая ограниченность чувственных данных, он делает неправильный вывод—недооценивает роль чувственного познания, считая, что только абстрактное мышление является достоверным источником познания. Эта идеалистическая тенденция его гносеологии явно проявляется в его толковании источника наших знаний о причинных связях. Непонимание роли практики в процессе познания приводит его к отрицанию опытного характера наших общих знаний.

Логику Физик-Погос рассматривает в качестве мощного оружия познания внешнего мира, всеобщего метода достижения истины.